




## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### ԱՄԱՆՈՐԻ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ



աամուրյան գիրկն անցավ 1952 թվականը և աշխարհի վրա բե-  
վածեց նոր՝ 1953 թվականը:  
Հին և նոր տարիների սահմա-  
նագծում, երբ եզրափակվել է հին տարին և  
նորվագծվում է նորը, աշխարհի բոլոր մար-  
դիկ, լինեն շինականներ քե բանվորներ, ծա-  
ռայողներ քե արհեստավորներ, մտավորա-  
կաններ քե հոգևորականներ, բոլո՛ր, բոլո՛ր  
ազնիվ հոգիները, լավագույն հույսերով և ա-  
կրկնալուրջությամբ են դիմավորում վերա-  
նաս տարին:

Աշխարհի առաջավոր մարդկության առա-  
ջին և լավագույն բարեմաղորտությունն է, որ  
առաջիկա տարին լինի խաղաղության տա-  
րի, որ մեղմանա և բոլորովին վերանա պա-  
տերազմի վտանգը և իրականանա մարդկու-  
թյան դարավոր այն երազանքը, որը պատ-  
կերավոր արտահայտված է Բեթղեհեմի Մա-  
նուկի ծննդյան ավետիսի երգում. «Փա՛ռք ի  
բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղու-  
թիւն, ի մարդիկ հանութիւն» (Ղուկ., Բ 14):

Անցյալի պատմության մեջ գուցե ո՛չ մի  
սերունդ այնքա՛ն չի երազել խաղաղության  
համար, այնքա՛ն հետևողականորեն չի պայ-  
քարել պատերազմի դեմ, որքան մեր ներկա  
սերունդը: Եվ այդ ունի իր օրինական պատ-  
ճառը — որովհետև ո՛չ մի սերունդ չի տեսել

սարսափելի այնպիսի պատերազմներ, որքան  
մեր սերունդը, որովհետև անցյալում ո՛չ մի  
պատերազմ այնքան ծաղիկ կյանքեր չի խլել.  
որքան վերջին համաշխարհային պատերազ-  
մը: Մեր ներկա սերունդը հաշակել է պա-  
տերազմի դառնությունները, տեսել է մի-  
լիոնների քափված արյունը, հազարավոր  
հաղափների և գյուղերի հիմնահատակ կոր-  
ծանումը և այժմ չի ցանկանում բարեբեր այս  
աշխարհը դժոխքի վեր ածված տեսնել: Ահա  
այդ է պատճառը, որ միլիոնավոր մարդիկ  
հաստատակամորեն ոտքի են կանգնել և  
ընդդիմանում են Բեթղեհեմի ողբերգի-  
ն՝ աշխատավոր մարդկության արյուն արցուն-  
քից հարստություն դիզող այդ սև, անկուշտ  
ուժերին, որոնք այսօր պատերազմ են սկսել  
Կորեայում և վաղվա օրը ցանկանում են  
պատերազմի հրդեհը ծավալել ողջ աշխար-  
հով:

Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին, սեր  
և խաղաղություն փարգող քրիստոնեական  
բոլոր եկեղեցիների հետ միասին, ինչպես  
միշտ, այսօր ևս, նոր տարվա սեմին, աշ-  
խարհին բարեմաղորտ է խաղաղություն: Նա  
աղոթում է Աստծուն, որ խաղաղությունը  
վերջնական հաղթանակ տանի պատերազմի  
վրա և խափանի պատերազմի հրձիգների  
չար դիտավորությունը՝ «Խափանեցցին հոգա  
և որ առնենն զնոսա» (Առաքել, Ի 10):

Անցյալ տարին արդյունաշատ տարի հանդիսացավ մեր ծաղկող Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի համար։ Նախընթացը չունեցող չափով ու ծավալով անեց, բարգավաճեց մեր Հայրենիքը ժողովրդական տրևտեսության բոլոր բնագավառներում։— Կառուցվեցին նոր գործարաններ և ֆաբրիկաներ, որոնք նոր բարիքներ են բերում և առատություն ստեղծում։ Գյուղ մտան անհամեմատ ավելի շատ մեքենաներ՝ տրակտորներ, շարֆացաններ, հեծող մեքենաներ, կալսիչներ և այլն, որոնք հեշտացնում են գյուղացու երեքմսի ծանր և չարժաշխատանքը։ Բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած բազմահազար մասնագետների նոր շարքեր եկան համալրելու գիտության, գրականության, արվեստի մեղվաչան աշխատողների բանակը, որոնք աշխատում են հանուն երջանկության և լավագույն ապագայի։ Չկա շինարարության և ստեղծագործության մի ասպարեզ, ուր հաջողություններ արձանագրված չլինեն անցյալ տարի։ Մեր Հայրենիքի զարգացման մասին ցուցանշական է մեր ամսագրի ներկա համարում տպագրվող Սովետական Հայաստան այցելած օտարերկրյա հյուրերի անկողմնակալ կարծիքը՝ մեր ժողովրդի առաջընթացի, մեր ֆաղափների և գյուղերի, մեր զարգացման մասին, որն անսահման ուրախությամբ է լցնում ամեն մի անկեղծ հայրենասերի սիրտը և, շառաչուն ապտակ է այն մարդկանց երեսին, որոնք պատիվ ու խիղճ վանառած, անվերջ դավում են Հայրենիքին և աշխատում վարկաբեկել նրան։

Ստեղծագործ հայ ժողովուրդը, իր դարավոր պատմության մեջ, խաղաղության իր տարիներին, միշտ էլ դրսևորել է իր արտակարգ ընդունակությունները շինարարության և ստեղծագործության այլևայլ ասպարեզներում։ Սակայն մեր ներկա տարիները, իրենց բերած արդյունքով, անցյալի սովորական տարիների բովանդակությունը չունեն— այդ տարիներից յուրաքանչյուրը՝ մեր նվիրական Հայրենիքին իր բերած արդյունքով, հավասար է անցյալի մի ամբողջ դարի. սովետական 32 տարիները հավասար են մեր պատմության 32 դարերին։ Այն տեղաշարժերը, որոնք կատարվել ու կատարվում են


մեր Հայրենիքում, կես դար առաջ չէր կարող պատկերել ամենալավագույն օպտիմիստն անգամ։ Անցյալում այնքան վիշտ ու խեղճություն տեսած հայ ժողովուրդը, սովետական կենսաբեր արևի տակ, Սովետական Միության փառապանծ ընտանիքում, այսօր ավելի քան երբևէ համարձակ կանգնած է իր հաստատուն ոտների վրա և կերտում է իր լուսաշող ապագան։

Հանդիսավոր այս օրերին հայ ժողովուրդն իր երախտագիտական խոսքն է ուղղում ուսու ազնիվ ժողովրդին, որը մեր ժողովրդի ամենածանր և հակառակգրական օրերին լավագույն բարեկամն ու աջակիցն է հանդիսացել։ Նա իր գոհունակությունն է հայտնում Սովետական Միության իմաստուն ղեկավարներին, որոնք հայ ժողովրդի փրկիչն ու ազատարարն են հանդիսացել։

Նոր տարվա սեմին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ի խորոց սրտի եղբայր հաջողություններ է բարեմաղքում իր աչքի լույս Հայրենիքին. ես բարեմաղքում է, որ ավելի ծաղկի, ավելի հզորանա և բարգավաճի մեր սիրասուն Հայրենիքը։

Այն ժամանակ, երբ մեր ժողովուրդը մեր Հայրենիքում ապրում է երջանիկ կյանքով, ապա Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների սահմաններից դուրս ապրող մեր հարազատները զրանրվում են վերին աստիճանի ծանր, անմխիբար վիճակում։ Նրանք տագնապով, անձկությամբ են նայում վերահաս տարվա վրա. տնտեսական նոր վատբարացում, գործազրկություն, ազատության նոր սահմանափակում և անապահովություն արդյոք չի՞ բերելու այս տարին. ի վիճակի ե՞ն լինելու արդյոք նրանք պահել, պահպանել իրենց ընտանիքը, իրենց երեխաներին։

Ամանորի սեղանների շուրջը հավաքված մեր բոլոր հայրենակիցները պիտի հիշեն ահա մեզնից բաժանված և աշխարհով մեկ ցրված հոգեհարազատ մեր այդ եղբայրներին, որոնք չնայած գտնվում են հեռավոր հորիզոններում, բայց որոնց սիրտը, որոնց զգացմունքը և ողջ էությունը Հայրենիքի հետ է, որոնց ուրախության միակ աղբյուրը իրենց Հայրենիքի ծաղկումն և բարգավաճումն է։



Ս. Էջմիածնի Մուսր Տաճարը

Անարդարությունը, ննջումը, բռնությունը մեծ չափերի են հասնում այսօր դրամատի-  
րական որոշ երկրներում: Միլիոնավոր մար-  
դիկ դատապարտված են գործազրկության և  
կիսաֆաղց գոյության. կարիքն ու բշտառու-  
թյունն է այսօր միլիոնների բաժինը.  
«Մերկ էի՝ չհագցրիք ինձ, սոված էի՝ և  
չկերակրեցիք ինձ, ծարավ էի՝ և ինձ ջուր  
չավեցիք, օտար էի՝ և ինձ այցելության չե-  
կաք», — լսվում է ամեն կողմից:

Եվ անա Քրիստոս, իր ծննդյան սուրբ  
խորհրդով, եղբայրացավ այդ անժառանգնե-

րի, զրկվածների, մոռացվածների հետ:  
Քրիստոսի ծննդյան նվիրական պահից, հրե-  
շում է երկրի վրա ժողովուրդների եղբայրու-  
թյան համբուրելի պատգամը:

Մարդկային կյանքի իսկական նպատակը  
ժողովուրդների ներկա ու ապագա խաղաղու-  
թյունն է ու երջանկությունը:

Ազոթենք առ Աստված, որ իրականանա  
աշխարհի բոլոր ազնիվ մարդկանց շրթունա-  
կներից լսվող հոգեբով մրմունջը.

«Տե՛ր ԱՄԵՆԱԿԱՂ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՊԱՐ-  
ԳԵՎԻ՛Ր ԱՇԽԱՐՀԻՆ ԵՎ ԽԱՓԱՆԻ՛Ր ՀՐԶԻԳՆԵ-  
ՐԻ ՋԱՐ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՄԵՆ»:

